ԱՅԴ ԿԱՐԱՍՆԵՐԸ ՋՐՈՎ ԼՑՐԷՔ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 2.1-11

*1 Երրորդ օրը Գալիլեայի Կանա քաղաքում հարսանիք կար: Այնտեղ էր նաև Հիսուսի մայրը: 2 Հարսանիքի հրավիրուեցին նաեւ Հիսուս եւ իր աշակերտները: 3 Եւ երբոր գինին պակասեց, Յիսուսի մայրն ասեց նորան. Գինի չունեն: 4 Եւ Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել»: 5 Նրա մայրը սպասաւորներին ասաց. Ինչ որ ձեզ ասի, արէ՛ք: 6 Այնտեղ վեց քարէ կարասներ կային Հրէաների մաքրուելու համար, նրանցից յուրաքանչյուրը շուրջ հարյուր լիտր տարողություն ունէր: 7 Հիսուսը նորանց ասեց. **Այդ կարասները ջրով լցրէք.** Եւ լցրին բերնէբերան: 8 Եւ նորանց ասեց. Հիմա առէք եւ տարէք սեղանապետին. եւ նորանք տարան: 9 Եւ երբ սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը ու չէր իմանում, թէ որտեղից է (բայց սպասաւորները, որոնք ջուր լցրին, գիտէին), սեղանապետը փեսային կանչեց, 10 Եւ նորան ասեց. Ամէն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը. Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես: 11 Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան:*

ՈՐՈՇ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՍ ԴԱՏԱՐԿ ԿԱՐԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

- *Ամեն մի կարասի կշիռը դատարկ ժամանակ եղել է 190 pound, 86 կիլոգրամ.*
- *Ամեն մի կարասի մեջ կարող էին լցնել 30 gallons (գալոն), 100 լիտր ջուր,:*
- *6 կարասների մեջ կարող էին լցնել 150 gallons ջուր, 567 լիտր:*
- *Դա մոտավորապես 150 մարդու համար բավարար ջուր էր:*
- *Եվ բոլոր կարասների կշիռը լցված ժամանակ, կազմում էր մոտ 1800 pounds, 817 կիլոգրամ.*

ՈՐՈՇ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

- *Մենք չգիտենք, թե քանի հոգի է ծառայել այս կարասները լցնելու և սպասարկելու համար: Այդ ժամանակաշրջանի ջրհորները եղել են մոտ մինչև 60 (200 ft.) մետր խորությամբ և ջուրը կարող էին այնտեղից հանել փոքր դույլերի օգնությամբ:*
- *Առնվազը 20 մարդ պետք էր որպեսզի այդ կարասները տանեին ջրհոր, որի հեռավորությունը կլիներ մոտ կես կիլոմետր:*
- *Բայց դեռ դա բավական չէր: Հիշեցնեմ, որ Տերը պատվիրեց կարասների մեջ ջուրը լցնեն բերնեբերան:*

I. ԲՆԱԿԱՆՆ ՈՒ ԳԵՐԲՆԱԿԱՆԸ ՉԵՆ ԽԱՌՆՎՈՒՄ

- *Աստված վերցնում է բնականը և դարձնում այն գերբնական նպատակի գործիք:*

  *Ղուկաս 5.37-39 – 37 Եվ ոչ ոք հին տիկերի մեջ **<u>նոր գինի չի լցնի</u>**, այլապես նոր գինին տիկերը կպայթեցնի, գինին կթափվի, տիկերն էլ կփչանան: 38 Այլ նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի, և երկուսն էլ կպահվեն: 39 Ոչ ոք հինը խմելուց հետո նորը չի ուզի, որովհետև կասի, թե հինն ավելի լավն է:*

- ***Նոր գինին (Հոգով լցված կյանքը) պետք է նոր կարասների կամ նոր տիկերի մեջ լցվի (վերածնված, նորոգված սրտերում):***

  Եղիսեն ասաց նրան. Ես ի՞նչ անեմ քեզ համար, ասա՛ ինձ. ի՞նչ ունես տանդ: Եվ նա ասաց. Քո աղախինն իր տանը ոչինչ չունի, բացի մի ման յուղից (Դ Թագ. 4.2):

  «Երբ ամանները լցվեցին... յուղը դադարեց »: Աստված անսահման է, բայց մեր ընդունելիության սահմաններն են որոշում Նրա հոսքի չափը (Դ Թագ. 4.5-7):

- ***Ուրեմն եթե ուզում ենք Աստծո ավելի մեծ լեցունություն, պետք է մեր «ամանները» (սրտերը, կյանքը, սպասումը) դատարկ ու պատրաստ լինեն:***

II. ԳԻՆԻ ԴԱՐՁԱԾ ՋՈՒՐԸ ԹՇՆԱՄՈՒՆ ՇՓՈԹՈՒԹՅԱՆ Է ՄԱՏՆՈՒՄ

*Դ Թագ. 3 – 16 Եվ նա ասաց. Այսպես է **ասում** Տերը. Այս հեղեղատի մեջ փոսե՛ր արեք: 17 Որովհետև Տերն այսպես է ասում. Քամի չեք տեսնելու և անձրև չեք տեսնելու, բայց այս հեղեղատը կլցվի ջրով, և կխմեք դուք և ձեր հոտերն ու ձեր անասունները:*

- ***ինչքան փոս փորեցին, այդքան էլ լցվեց ջրով: Նույնն է մեր սրտերի հետ. նախ պետք է դատարկենք, փորենք, հարթենք ու պատրաստենք:***

  22 Վաղ առավոտյան վեր կացան, ու երբ արեգակը ծագեց ջրերի վրա, մովաբացիներն այդ ժամանակ հեռվից նայեցին ջրերին, որ կարմիր էին արյան պես: 23 Եվ ասում էին. Սա արյուն է.

  Սաղ. 23.5 - Դու իմ առաջին սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես իւղով. իմ բաժակը խիստ լիքն է:

- ***Տերն իր փառքն ու զորությունը բացահայտում է այնտեղ, որտեղ տեղ է պատրաստված Նրա համար:***

III. ԲՐՈՒՏԻ ԳՈՐԾԸ ԱՆԹԵՐԻ Է

ինչպես որ կավն է բրուտի ձեռքին, նույնպես դուք՝ իմ ձեռքին. (Երեմիա 18.6)

Բայց այս գանձն ունենք կավէ ամանների մէջ, որպէսզի զօրության գերազանցությունը Աստծուց լինի եւ ոչ մեզնից (2 Կոր. 4.7):

- ***Սիրելինե՛ր, Տերը այսօր էլ փնտրում է դատարկ կարասներ և պատրաստ սրտեր, որոնք լցված չեն աշխարհով, անհանգստություններով ու եսասիրությամբ:***

- ***Եթե տեղ թողնես մի փոքր, Նա մի փոքր կլցնի: Բայց եթե քո սիրտը ամբողջությամբ դատարկես ու Նրան նվիրես, Նա կլցնի քեզ Իր Նոր Գինով, Իր Սուրբ Հոգու Նոր Յուղով, Իր կենդանի Ջրով:***

  Հռ. 15.13 - Եւ Հոյսի Աստուածը լեցնէ ձեզ ամեն ուրախությունով եւ խաղաղությունով, հավատալու մէջ, որ հուսով ավելանաք Սուրբ Հոգու զօրութիւնով:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ